ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 22.10.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2021/255

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Երևանի թիվ 1 տուն-ինտերնատ» ՊՈԱԿ
Մասնակից՝ «Վիկտորյա Գրուպ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Երևանի թիվ 1 տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի ներկայացուցիչ՝ Լ. Վերմիշյանի,
«Վիկտորյա Գրուպ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Հ. Քոյլոյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-Ս-ՏԻ» գնանշման հարցման ընթացակարգ, սննդամթերքի ձեռքբերում

Պայմանագրի ծածկագիրը՝ «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-Ս-ՏԻ-ՎԳ»:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 25.09.2021թ.-ի թիվ 26/26-1/15511-2021 գրությամբ «Վիկտորյա

Գրուպ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

ՊԱՐԶԵՑ

1. <u>Գործի նախապատմությունը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Երևանի թիվ 1 տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 16.09.2021թ. թիվ ՍՄ//37446-2021 գրության հիման վրա, 25.09.2021թ.-ին «Վիկտորյա Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 25.09.2021թ.-ին:

25.09.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-LO-2021/255 համարի ծածկագիրը:

05.10.2021թ.-ին և 22.10.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 05.10.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 22.10.2021թ.-ին:

2. <u>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Երևանի թիվ 1 տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Երևանի թիվ 1 տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ը 16.09.2021թ. թիվ ՍՄ//37446-2021 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը հայտնելով հետևյալը.

«Հայտնում եմ Ձեզ, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և «Վիկտորյա Գրուպ» ՍՊԸ-ի միջև 2020 թվականի դեկտեմբերի 29-ին կնքված «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-Ս-ՏԻ-ՎԳ» ծածկագրով «Երևանի թիվ 1 տուն-ինտերնատ» պետական ոչ առևտրային կազմակերպության կարիքների համար սննդամթերքի մատակարարման

հետ կապված պայմանագրի էական խախտումների հետևանքով «Երևանի թիվ 1 տուն-ինտերնատ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը լուծել է «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-Ս-ՏԻ-ՎԳ» ծածկագրով մատակարարման պայմանագիրը:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 5-ի N 526 որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի պահանջները, «Վիկտորյա Գրուպ» ՍՊԸ-ին գնումներին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթացը նախաձեռնելու նպատակով, Ձեզ եմ ներկայացնում վերոնշյալ գնման ընթացակարգին վերաբերող փաստաթղթերի փաթեթը:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-Ս-ՏԻ-ՎԳ» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Վիկտորյա Գրուպ» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

Պատվիրատուն 08.10.2021թ.-ին ներկայացրած գրությամբ հավելել է նաև հետևյալը.

«Ձեր վարույթում քննվող ՍՑ-ԼՕ-2021/255 ծածկագրով ընթացկւսրգի (այսուհետ Ընթացակարգ) վերաբերյալ հայտնում ենք հետևյալը՝

1. «Երևանի N1 տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ը ընդունում է այն հանգամանքը, որ ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և «Վիկտորիա Գրուպ» ՍՊԸ (այսուհետ՝ Մատակարար միջև 29.12.2020թ.-ին կնքված թիվ ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ- 21/1-Ս-ՏԻ-ՎԳ Պետության կարիքների համար սննդամթերքի մատակարարման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) Հավելված 1-ում, որպես մատակարարման ժամկետ թյուրիմացաբար նշված է 25.12.2021թ.-ը: Սակայն ելնելով տարական տրամաբանական եզրույթից, կարող ենք պնդել որ Հավկիթի նման առաջին անհրաժեշտություն համարվող և պիտանելիության շատ կարճ ժամկետ ունեցող սննդամթերքի պարագայում, հիշյալ ժամկետի առկայությունը առնվազն տարակուսելի է և լի է բավականին լուրջ ոչ ցանկալի հետևանքներով, հետևյալ պատճառաբանությամբ՝

ա. Մատակարարը հնարավորություն է ստանում առանց պատճառաբանության ամբողջ տարին չմատակարարել Հավկիթ, որը ամբողջովին խեղաթյուրում է բուն մատակարարման իմաստը և ընդհանրապես մրցույթների անցկացման տրամաբանությունը և Տարեց խնամյալների կարիքների բավարարման բուն էությունը: Մեր համողմամբ օգտվելով հենց այս հանգամանքից Մատակարարը, հասկանալով, որ պայմանագրում ամրագրված հավկիթի արժեքը՝ 1 Հավկիթի համար 48,5 ՀՀ դրամը Հայաստանի այսօրվա

պայմաններում չափազանց էժան գին է և այն իրականացնելով վերջինիս կհանգեցնի տնտեսական վնասներ, փաստացիորեն հրաժարվել է բուն մատակարարումներից:

b. Մատակարարը հնարավորություն է ստանում 2021թ, դեկտեմբերի 25-ին միանգամից մեկ հսկայական չափաքանակով իրականացնել մատակարարումներ: Արդյունքում այդ քանակության Հավկիթ մեր Կազմակերպության Խնամյալների կողմից սպառելը ուղղակի անհնարին կլինի և կհանգեցնի այդ քանակի սննդամթերքի փչացման, այսինքն կարող է արձանագրվել պետական միջոցների վատնման փաստ, դրանից բխող ծանրագույն հետևանքներով:

2. «Երևանի N1 տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի բուն գործունեությունը՝ տարեց և 18 տարին լրացած հաշմանդամների շուրջօրյա խնամքի իրականացումն է և այդ տեսակետից վերոշարադրած հանգամանքները որևէ պարագայում չեն կարող արտացոլել խնամյալներին անհրաժեշտ սննդի ապահովման բուն էությունը և զուրկ են Մատակարարի կողմից կնքված պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարման կոռեկտության և հուսալիության որևէ տրամաբանությունից:

3. Պայմանագրին կից Համաձայնագիր 1-ի Հավելված 2-ում հաստատված վճարմանժամանակացույցը ենթադրում է, որ նույն ժամանակացույցին համահունչ պետք է իրականացվեին համապատասխան մատակարարումները:

Ամփոփելով վերոգրյալը, «Երևանի N1 տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ը որոշում է կայացրել միակողմանիորեն լուծել Պայմանագիրը և պնդում է այն տեսակետը, որ Մատակարարը պետք է ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:»:

3. <u>«Վիկտորյա Գրուպ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 25.09.2021թ.-ին գրությամբ դիմել է «Վիկտորյա Գրուպ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 25.09.2021թ.-ի թիվ 26/26-1/15511-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

Մասնակիցը, 05.10.2021թ.-ին ներկայացնելով նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ գրավոր դիրքորոշում, հայտնել է հետևյալը.

«Ձեր վարույթում քննվող ՍՑ-ԼՕ-2021/255 ծածկագրով ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) վերաբերյալ հայտնելով դիրքորոշումս նշեմ, որ ՀՀ ֆինանսների նախարարության պահանջը «ՎԻԿՏՈՐՅԱ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերությանը (այսուհետ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ հիմնավորված չէ հետևյալ պատճառաբանություններով:

Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի ա պարբերության համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի «Գնումների կազմակերպման» կարգը հաստատելու մասին 526-Ն որոշման հավելված 1-ով հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 45-րդ կետի համաձայն Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ Օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են՝ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվել: Այսինքն միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Այսինքն պայմանագրով նախատեսված պարտավորության խախտման և պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի

լուծման միաժամանակյա առկայության դեպքում նոր կարելի է փաստել մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերի մասին: Ի դեպ նշված իրավակարգավորումը ինքնանպատակ չէ, այն ուղղված է կարգավորելու երկկողմ շահերը՝ պատվիրատուի և մասնակցի և դրանց համադրության համատեքստում նոր միայն հնարավոր է արձանագրել կիրառելի իրավական նորմերի մասին:

Ուստի գտնում եմ, որ սույն գործով պարզաբանման է ենթակա հետևյալ հարցադրումը.

Արդյո՞ք «ՎԻԿՏՈՐՅԱ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերությունը խախտել է կողմերի միջև 29.12.2020 թվականին կնքված թիվ «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-Ս-ՏԻ-ՎԳ» պայմանագրով նախատեսված պարտավորությունները:

Նշվածը համադրելով սույն գործի փաստերի հետ պետք է արձանագրել հետևյալը՝ թիվ «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-Ս-ՏԻ-ՎԳ» պայմանագրի (այսուհետ նաև պայմանագիր) շրջանակում Ընկերությունը պետք է մատակարարեր տեխնիկական բնութագրով-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքներ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում՝ ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո մինչև 25.12.2021 թվականը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան, իսկ նման պայմանների ու պահանջների բացակայության դեպքում՝ գործարար շրջանառության սովորույթներին կամ սովորաբար ներկայացվող այլ պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին:

Վերոհիշալ իրավական նորմերի վերլուծությունից հետևում է, որ պարտավորության ուժով պարտապանը պարտավոր է պարտատիրոջ օգտին կատարել որոշակի գործողություն, այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջելու կատարել իր պարտականությունը: Ընդ որում, պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ, հակառակ դեպքում պարտավորությունը խախտողի նկատմամբ առաջանում են որոշակի բացասական հետևանքներ: Ծառայությունների մատուցումը իր բնույթով հանդիսանում է պարտավորական իրավահարաբերություն, որի պարագայում կողմերից մեկը հանդես է գալիս որպես պարտատեր, իսկ մյուս կողմը՝ պարտապան: Ուստի պարտատիրոջ պահանջի սուբյեկտիվ իրավունքին համապատասխանում է պարտապանի՝ պարտավորությունը պատշաճ կատարելու պարտականությունը:

Նշված հանգամանքը համադրելով սույն գործի փաստերի հետ պետք է արձանագրել հետևյալը, որ 29.12.2020 թվականին կնքված թիվ «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-Ս-ՏԻ-ՎԳ» պայմանագրի ուժով Ընկերությանը մատակարարման ենթակա ապրանքները պարտավորության ուժով կարող էր մատակարարել մինչև 25.12.2021 թվականը, ուստի մինչ այդ պարտավորության կետանցի մասին խոսելը առնվազն անտրամաբանական է: Ընդ որում 29.12.2020 թվականին կնքված թիվ «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-Ս-ՏԻ-ՎԳ» պայմանագրի 2.1.1. կետի համաձայն՝ գնորդն իրավունք ունի ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի: Նշվածի համատեքստում պետք է փաստել, որ գնորդի մոտ մատակարարման ենթակա ապրանքներից հրաժարվելու իրավունքը ծագում է այն դեպքում, երբ մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի: Սույն դեպքում պատասխանատու ստորաբաժանման կողմից ձևավորված հանձնաժողովը 27.08.2021 թվականին կազմված արձանագրությամբ մատնանշել է, որ 29.12.2020 թվականին կնքված թիվ «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-Ս-ՏԻ-ՎԳ» պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման հայտ է ուղարկել Ընկերությանը 23.08.2021 թվականին, որի արդյունքում չի մատակարարել և պարզ է դարձել, որ չի էլ մատակարարելու: Նույնաբովանդակ արձանագրություններ են կազմվել 03.09.2021 թվականին և 09.09.2021 թվականին և արդյունքում «Երևանի թիվ 1 տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի տնօրենի 09.09.2021 թվականի որոշմամբ Պատվիրատուն միակողմանի հրաժարվել է կողմերի միջև 29.12.2020 թվականին կնքված թիվ «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-Ս-ՏԻ-ՎԳ» պայմանագիրը կատարելուց, նույն պայմանագրի 2.1.1.

կետի և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն: Պատվիրատուն սխալ կիրառելով վերոհիշյալ իրավական ակտերը, սխալ արձանագրեց այն հանգամանքը, որ իրավասու էր մինչ պայմանագրով նախատեսված ժամկետը պահանջել ապրանքների մատակարարում և արդյունքում միակողմանի լուծեր այն: Պայմանագրի 2.1.1. կետի համաձայն Պատվիրատուն ոչ թե կարող է հրաժարվել պայմանագրի կատարումից, այլ կարող է այն միակողմանի լուծել, եթե խախտվել են մատակարարման ժամկետները 5 օրից ավելի, ուստի Պատվիրատուի համար առաջնային պետք է համարվեր պարտավորության ժամկետի արձանագրման պահը, կետանցի օրն ու այն 5 օրով խախտելը, որից հետո կարողանար միակողմանի լուծել պայմանագիրը: Սույն դեպքում Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման ժամկետը 25.12.2021 թվականն էր և մինչ այդ մատակարարման ենթակա ապրանքները պահանջելը չէր բխում պայմանագրից, որով պայմանավորված Պատվիրատուն գործել է ոչ իրավաչափ և սխալ արձանագրելով պարտավորության խախտման փաստը՝ հրաժարվել պայմանագրի կատարումից:

Պատասխանելով պարզաբանման ենթակա հարցադրմանը պետք է փաստել, որ «ՎԻԿՏՈՐՅԱ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերությունը չի խախտել կողմերի միջև 29.12.2020 թվականին կնքված թիվ «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-Ս-ՏԻ-ՎԳ» պայմանագրով նախատեսված պարտավորությունները:»:

Վերոգրյալից ելնելով՝ Մասնակիցը Բողոքներ քննող անձին խնդրել է մերժել ՀՀ ֆինանսների նախարարության՝ «Վիկտորյա Գրուպ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ նախաձեռնված ընթացակարգը:

Մասնակիցը 13.10.2021թ.-ին ներկայացրած դիրքորոշման լրացմամբ հավելել է հետևյալը.

«Անդրադառնալով թիվ ՍՅ-ԼՕ-2021/255 ծածկագրով ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) շրջանակում Պատվիրատուի 08.10.2021 թվականի առարկություններին հայտնեմ հետևյալը, նշված առարկության մեջ Պատվիրատուն պարբերաբար անդրադառնում է իր տարակուսանքներին, սակայն ըստ էության պետք է արձանագրել, որ պայմանագրով նախատեսված պարտավորության ժամկետի խախտման բացակայության պարագայում առկա չեն մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր: Ինչ վերաբերվում է այն հանգամանքին, որ Պատվիրատուն ընդունում է այն փաստը, որ մատակարարման ժամկետը թյուրիմացաբար նշվել է 25.12.2021 թվականը, ապա դա որևէ կերպ չի արդարացնում Պատվիրատուի

գործողությունները նախապես պետք է հասկանար Պատվիրատուն թե երբ է իրեն պետք գնման ընթացակարգի շրջանակում մատակարվող ապրանքները, ընդ որում մատակարարման ենթակա ապրանքների ժամկետները սահմանվում են հրավերով, որով պայմանավորված մասնակիցը գնահատելով իր ռիսկերը կամ ակցեպտավորում է հրապարակային օֆերտան կամ ոչ, մինչ հրավերի հրապարակում պետք է Պատվիրատուն փարատեր իր տարակուսանքները և եթե որևէ աշխատակից թերացել է իր պարտականություններում, ապա դրա բացասական հետևանքները չի կրում մասնակիցը:»:

4. <u>ՍՑ-LO-2021/255 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Երևանի թիվ 1 տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի և «Վիկտորյա Գրուպ» ՍՊԸ-ի միջև 29.12.2020թ.-ին կնքվել է թիվ «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-Ս-ՏԻ-ՎԳ» ծածկագրով պետական գնման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

ii. Պայմանագրի 1.1-րդ կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

iii. Պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ 84-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետ է սահմանվել Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց և համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո՝ մինչև 25.12.2021թ.-ը:

iv. www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում 13.09.2021թ.-ին հրապարակված Պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման (որոշում թիվ 1) համաձայն՝ «Երևանի N1 տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի տնօրենի ժ/պ-ն, հիմք ընդունելով սննդամթերքի պատասխանատու ստորաբաժանման արձանագրությունը և «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-Ս-ՏԻ-ՎԳ» ծածկագրով պայմանագրերի 2.1.1 և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասը, որոշել է 2021թ.-ի սեպտեմբերի 9-ից միակողմ հրաժարվել «Երևանի թիվ 1 տուն-

ինտերնատ» ՊՈԱԿ-ի և «Վիկտորիա Գրուպ» ՍՊԸ-ի միջև կնքված պայմանագրի կատարելուց:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 25.09.2021թ.-ի թիվ 26/26-1/15511-2021 գրությամբ «Վիկտորյա Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից: Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին: Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Պայմանագրի 2.1.1 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել Պայմանագրի թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակցույցով

նախատեսված պաշտպանիչ միջոցներ (այսուհետ նաև՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Պայմանագրի 2.1.7.1 կետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրացուցային օրից ավելի:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելվել նաև, որ ստանձնած պարտավորությունների (այդ թվում՝ ընթացակարգի և պայմանագրի) խախտման հիմքերը պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ: Օբյեկտիվ

հիմքերի մեջ կարելի է դասել ֆորսմաժորային դեպքերը՝ տարերային աղետները, ինչպես նաև արտակարգ իրավիճակը և նմանատիպ այլ՝ անձանց կամքից անկախ հիմքերով առաջացող պատճառները: Սուբյեկտիվ գործոնը պայմանավորված է անմիջականորեն տվյալ անձի հետ կապված և գործնականում ավելի երկար ժամանակ պահանջող ողջամիտ խնդիրների լուծմամբ, առանց որի անհնար է ստանձնած պարտավորությունների կատարումը:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ բոլոր դեպքերում էլ, բացի ֆորսմաժորային իրավիճակներից, ստանձնած պարտավորությունների խախտման համար մեղքի բացակայության փաստը հաստատված համարելու համար ընդհանուր կանոնն այն է, որ անձը պարտավոր է ապացուցել, որ օրենքով սահմանված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ ժամկետի ընթացքում ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ այդ պարտավորությունների պատշաճ կատարումն իրականացնելու ուղղությամբ, սակայն իր կամքից անկախ պատճառներով խախտել է գնման ընթացակարգով կամ պայմանագրով ստանձնած պարտավորությունը(ները): Օբյեկտիվ և սուբյեկտիվ հիմքերի վերաբերյալ նմանատիպ դիրքորոշում է հայտնել ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներում *(տե՛ս, «Հայբիզնեսբանկ» ՍՊԸ-ն ընդդեմ «Միլլար» ՍՊԸ-ի թիվ ԵԿԴ/2628/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 03.12.2014 թվականի որոշումը)*:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Երևանի թիվ 1 տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի և «Վիկտորյա Գրուպ» ՍՊԸ-ի միջև 29.12.2020թ.-ին կնքված թիվ «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-Ս-ՏԻ-ՎԳ» ծածկագրով պետական գնման Պայմանագրով Մասնակիցը պարտավորվել է Պատվիրատուին մատակարարել պայմանագրի թիվ 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը: Պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով 84-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետ է սահմանվել Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց և համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո՝ մինչև 25.12.2021թ.-ը:

www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում 13.09.2021թ.-ին հրապարակված Պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման (որոշում թիվ 1) համաձայն՝ «Երևանի N1 տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի տնօրենի ժ/պ-ն, հիմք ընդունելով սննդամթերքի պատասխանատու ստորաբաժանման արձանագրությունը և «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-Ս-ՏԻ-ՎԳ» ծածկագրով պայմանագրերի 2.1.1 և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ

մասը, որոշել է 2021թ.-ի սեպտեմբերի 9-ից միակողմ հրաժարվել «Երևանի թիվ 1 տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի և «Վիկտորիա Գրուպ» ՍՊԸ-ի միջև կնքված պայմանագրի կատարելուց:

Վերոգրյալ իրավական ու փաստական հանգամանքների հիման վրա, ուսումնասիրելով Պատվիրատուի և Մասնակցի կողմից ներկայացված դիրքորոշումները՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ Պայմանագրի 2.1.1 կետով սահմանված՝ Պատվիրատուին վերապահված իրավունքը կարող էր առաջանալ միայն Մասնակցի կողմից պայմանագրով ստանձնած պարտավորությունների ոչ ժամանակին կամ ժամկետների խախտմամբ կատարված լինելու պայմաններում: Սույն դեպքում, Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ Պայմանագրի 2.1.1 կամ 2.1.7.1 կետերի հիմքով Պատվիրատուն չէր կարող լուծել պայմանագիրը, քանի որ Պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով 84-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետ է սահմանվել Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց և համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո՝ մինչև 25.12.2021թ.-ը:

Վերոնշյալ փաստերի առկայության պարագայում միայն հնարավոր կլիներ արձանագրել Մասնակցի կողմից Պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով ստանձնած պարտավորությունների խախտման փաստը, որն էլ, իր հերթին, կհանգեցներ ժամկետների խախտմանը և դրանով պայմանավորված՝ հետագայում էլ (սույն ընթացակարգի քննության ժամանակ) հնարավոր լիներ գնահատելու Պատվիրատուի գործողությունների օրինաչափությունը, և վերջապես գնահատելու Մասնակցի՝ Պայմանագրով ստանձնած պարտավորության խախտման փաստը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին:

Նշված իրավանորմի վերլուծությունից պետք է փաստել, որ օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ

կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 25.09.2021թ.-ի թիվ 26/26-1/15511-2021 գրությամբ «Վիկտորյա Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2021/255 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**